

«Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ ծախսերի կազմի և կառուցվածքի վերլուծությունը

Գրիգորյան Գ. Վ.

ՀՊՏՀ, Բանկային գործի և ապահովագրության ամբիոնի մագիստրանտ

(Երևան, Հայաստան)

grigrig97@mail.ru

Վճռորոշ բառեր՝ «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ, ծախսեր, հորիզոնական և ուղղահայաց մեթոդներ, բացարձակ և հարաբերական շեղումներ

Анализ состава и структуры затрат СЗАО «Росгосстрах Армения»

Григорян Г. В.

АГЭУ, магистр кафедры банковского дела и страхования (Ереван, Армения)

grigrig97@mail.ru

Резюме: В ходе своей деятельности компании сталкиваются со многими проблемами, наиболее важной из которых является правильное управление доходами и расходами. Для устранения и эффективного управления такими проблемами компании должны применять факторный анализ и другие методы для выявления любых колебаний, которые могут подорвать прибыльность компании и позволить их устранить. Анализ экономической деятельности очень важен для управления организациями, а также для принятия эффективных управленческих решений в рыночной экономике. В результате анализа вырабатывается стратегия развития организации, оценивается уровень выполнения бизнес-плана, выявляются уровни повышения эффективности экономики.

Ключевые слова: Росгосстрах Армения СЗАО, затраты, горизонтальные и вертикальные методы, абсолютные и относительные отклонения

Analysis of the composition and structure of costs of Rosgosstrakh Armenia ICJSC

Grigoryan G. V.

ASUE, master at chair of Banking and Insurance (Yerevan, Armenia)

grigrig97@mail.ru

Abstract: In the course of their operations, companies face many problems, the most important of which is the proper management of revenues and expenses. For the elimination and effective management of such problems, companies need to apply factor analysis and other methods to identify any fluctuations that would undermine the profitability of the company and enable them to be eliminated. An analysis of economic activity is very important for the management of organizations as well as for effective management decisions in a market economy. The analysis elaborates the development strategy of the organization, evaluates the level of business plan execution, reveals the tiers of increasing the efficiency of the economy.

Keywords: Rosgosstrakh Armenia ICJSC, costs, horizontal and vertical methods, absolute and relative deviations

Ապահովագրական գործունեության ընթացքում ընկերությունները ոչ միայն ստանում են եկամուտներ, այլև կատարում են որոշակի ծախսեր, որոնք ընկերության անխափան աշխատանքի գլխավոր նախապայմաններից են: Ապահովագրողի խնդիրն է ապահովագրական պայմանագրով նախատեսված իրադարձության ի հայտ գալու դեպքում ապահովադիրներին տրամադրել ստանձնած ռիսկի չափով փոխհատուցում: Ըստ այդմ, ընկերությունները պետք է կարողանան ճիշտ հաշվարկել ապագա ռիսկերը,

սահմանել օպտիմալ սակագներ, որպեսզի խուսափեն հետագա անվճարունակության խնդիրներից:

Իր գործունեության ընթացքում ապահովագրական ընկերությունը կատարում է ծախսեր, որոնցից մի քանիսը, կապված գործունեության ընդլայնման հետ, կարող են մնալ անփոփոխ, իսկ որոշները՝ փոփոխվել: Սակայն, ապահովագրական գործունեության բնույթից կախված, ընկերության ծախսերի մեջ գերակշռում են փոփոխուն ծախսերը, քանի որ դրանք կապված են հնարավոր ռիսկի

առաջացման հետ, ստույգ կանխորոշել հնարավոր չէ և կարող են փոփոխվել ամեն տարի [1]:

«Ռուսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ծախսերի հիմնական ուղղությունները ապահովագրական հատուցումներն են, ձեռքբերման ծախսերը, այլ ապահովագրական, ֆինանսական և այլ ծախսերը: Նախ ներկայացնենք ընկերության ամենամեծ ծախսեր պահանջող բաժնի տարեկան ցուցանիշները՝ ապահովագրական հատուցումները, այնուհետև վերլուծենք ծավալային առումով ամենամեծ կշիռ ունեցող ուղղությունները:

Որպես տեղեկատվական աղբյուր ծառայել են «Ռուսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ հրապարակային հաշվետվությունները 2014-2018 թթ. համար:

2014-2018 թթ. ընթացքում ընկերությունը ապահովագրական հատուցումների գծով կատարել է 31 723 608 հազար ՀՀ դրամ ծախս, որից վերաապահովագրողի մասը կազմել է 7 542 200 հազար ՀՀ դրամ կամ 23,77 %: Չուտ ապահովագրական հատուցումները ստացվել են 24 181 408 հազար ՀՀ դրամ կամ 76,22 % (Աղյուսակ 1):

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, ապահովագրական հատուցումների մեջ 2014 թ. հատուցումները մեծ բաժին են կազմում: Պատճառը հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով խոշոր հատուցման հետ է կապված, որի ընթացքում տրվել է 4 829 600 հազար ՀՀ դրամ ապահովագրական հատուցում, ինչի մեջ վերաապահովագրողի մասը կազմել է 4 796 800 հազար ՀՀ դրամ: Հատուցումների մեջ հաջորդ խոշոր մասնաբաժինը պատկանում է ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը՝ 3 680 051 հազար ՀՀ դրամ կամ 2014 թ. համախառն հատուցումների 35,7 %-ը:

2015 թ. տրված հատուցումները նախորդ տարվա համեմատ նվազել են մոտ 55,8 %-ով և կազմել 4 544 406 հազար ՀՀ դրամ: Վերաապահովագրողի մասը կազմել է 7,92 % կամ 359 936 հազար ՀՀ դրամ, իսկ զուտ ապահովագրական հատուցումները՝ 92,08 % կամ 4 184 470 հազար ՀՀ դրամ: Ապահովագրական հատուցումների ծավալով ամենամեծ տեսա-


կարար կշիռն ունի ԱՊՊԱ-ն՝ մոտ 70 %, այնուհետև՝ առողջության ապահովագրությունը՝ 19,72 % և ցամաքային տրանսպորտի ապահովագրությունը՝ 6,6 %, իսկ ապահովագրության մյուս դասերով տրված հատուցումները ոչ մեծ ծավալ են կազմում: Եթե չհաշվենք 2014 թ. տեղի ունեցած խոշոր հատուցումը, ապա 2015 թ. ապահովագրական հատուցումները ոչ միայն մնացել են նույն մակարդակին, այլև ապահովագրության որոշ դասերով նույնիսկ նվազում են արձանագրել, ինչը բավականին առաջընթաց է 2015 թ. համար: Տեսանելի նվազում գրանցվել է ԱՊՊԱ-ի և ֆինանսական վնասների ապահովագրության դասերով համապատասխանաբար նվազելով 17,3 % և 68,8 % և կազմելով 3 043 129 հազար ՀՀ դրամ ու 186 269 հազար ՀՀ դրամ: Ապահովագրության մյուս դասերով էական փոփոխություններ չեն եղել և մնացել են հիմնականում 2014 թ. մակարդակին:

2016 թ. ընթացքում ապահովագրական հատուցումները գրեթե նույն մակարդակին են մնացել և կազմել 4 574 368 հազար ՀՀ դրամ, իսկ վերաապահովագրողների մասնաբաժինը տրված հատուցումներում ավելացել է 42,66 %-ով և կազմել 513 511 հազար ՀՀ դրամ կամ 11,22 %: Արդյունքում զուտ ապահովագրական հատուցումները նվազել են 2,9 %-ով և դարձել 4 060 857 հազար ՀՀ դրամ: Ապահովագրական հատուցումների տեսակարար կշիռը ավելացել է ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով՝ 26,6 %-ով՝ կազմելով 380 123 հազար ՀՀ դրամ, որից վերաապահովագրողի մասնաբաժինը կազմել է 43,67 %, ինչը գրեթե նույն մակարդակի վրա է նախորդ տարվա համեմատ: Ֆինանսական վնասների ապահովագրության դասով ապահովագրական հատուցումները ավելացել են մոտ 60 %, իսկ վերաապահովագրողի մասնաբաժինը կազմել է 66,2 % կամ 197 532 հազար ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 12,7 %-ի փոխարեն: Առողջության ապահովագրության դասով տրամադրված հատուցումները նվազել են 20 542 հազար ՀՀ դրամով և կազմել 875 781 հազար ՀՀ դրամ: Ապահովագրության մյուս դասերով էական փոփոխություններ չեն դիտվել: Չնայած համախառն հատուցումների ծավալը փոքր-ինչ աճել էր, այնուամենայնիվ վերաապահովագրողի կողմից տրված հատուցումներ-

Աղյուսակ 1. 2014-2018 թթ. ընթացքում «Ռոսգոստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի տրամադրած ապահովագրական հատուցումները հազար ՀՀ դրամ

Տարի	Ապահովագրական հատուցումներ	Ապահովագրական հատուցումներում վերաապահովագրողի մասը	Զուտ ապահովագրական հատուցումներ
2014 թ.	10 297 593	5 546 858	4 750 735
2015 թ.	4 544 406	359 936	4 184 470
2016 թ.	4 574 368	513 511	4 060 857
2017 թ.	5 458 745	439 015	5 019 730
2018 թ.	6 848 496	682 880	6 165 616
Ընդամենը	31 723 608	7 542 200	24 181 408

Գծապատկեր 1.



Աղյուսակ 2. 2014-2015 թթ. «Ռոսգոստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ծախսերի կազմի ու կառուցվածքի բացարձակ և հարաբերական շեղումների վերլուծությունը

Ծախսերի կատարման ուղղությունները	2014թ.		2015թ.		Շեղումը	
	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Ըստ գումարի (հզր ՀՀ դրամ)	Ըստ կառուցվածքի (%)
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	874 857	9,84	896 323	11,22	+21 466	+1,38
ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	126 261	1,42	171 146	2,14	+44 885	+0,72
ԱՊՊԱ	3 680 051	41,42	3 043 129	38,1	-636 922	-3,32
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	933 265	10,5	909 727	11,39	-23 538	+0,89
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	2 442 773	27,49	2 499 961	31,3	+57 182	+3,81
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (ՆԵՐԱՌՅԱԼ ՍՅՈՒՍ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)	8 884 279	100	7 986 589	100	-897 690	-

րի աճի շնորհիվ ընկերության զուտ ապահովագրական հատուցումները անկում են գրանցել, ինչը խոսում է ավելի ճիշտ վերաապահովագրական քաղաքականություն վարելու մասին՝ ի տարբերություն նախորդ տարիների:

2017 թ. ընթացքում ապահովագրական հատուցումների ծավալները կտրուկ աճ են գրանցել ապահովագրության գրեթե բոլոր դասերով: Համախառն հատուցումները աճել են 19,3 %-ով և կազմել 5 458 745 հազար ՀՀ դրամ: Վերաապահովագրողի կողմից տրված հատուցումները կազմել են 439 015 հազար ՀՀ դրամ կամ համախառն ապահովագրավճարների 8,04 %-ը: Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ցուցանիշի հետ, կտեսնենք, որ վերաապահովագրողի տոկոսային մասը նվազել է մոտ 3 %: Արդյունքում՝ զուտ ապահովագրական հատուցումները կազմել են 5 019 730 հազար ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 23,6 %: Ապահովագրական հատուցումներում մեծ տեսակարար կշռով ավելացել են առողջության ապահովագրությունը, որի հատուցումների աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 26,6 %, ապահովագրության նոր դասով՝ սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության դասով տրվել են 244 344 հազար ՀՀ դրամ հատուցումներ, ԱՊՊԱ-ի գծով ապահովագրական հատուցումները աճել են 15,4 %-ով ու կազմել 3 286 414 հազար ՀՀ դրամ, իսկ նվազում գրանցվել է միայն ֆինանսական վնասների ապահովագրության դասով՝ 2016 թ. համեմատ նվազելով 62,46 %-ով և կազմելով 111 933 հազար ՀՀ դրամ:

2018 թ. նույնպես աչքի չի ընկնում ապահովագրական հատուցումների ծավալների նվազմամբ: Սակայն այստեղ, ի տարբերություն անցած 4 տարիների, նկատվել էր ապահովագրավճարների ծավալների աճ, ինչը որոշ չափով նվազեցնում է ապահովագրական հատուցումների գծով ծախսերը: Ընթացիկ տարում ապահովագրական հատուցումները նվազել են ցամաքային տրանսպորտի, բեռների, հրեհի և բնական աղետների ու աջակցության ապահովագրության դասերով՝ յուրաքանչյուր դասով համապատասխանաբար 23,09 %, 96,1 %, 71,7 % և 61,88 %-ով, սակայն մյուս դասերով տեսանելի աճ են գրանցել,

մասնավորապես՝ սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության դասով հատուցումները նախորդ տարվա համեմատ ավելացել են մոտ 3 անգամ՝ կազմելով 837 808 հազար ՀՀ դրամ, առողջության ապահովագրության դասով ավելացել են 15,8 %-ով՝ կազմելով 1 284 431 հազար ՀՀ դրամ: Թերևս ամենամեծ աճը գրանցվել է ԱՊՊԱ-ի և ֆինանսական վնասների ապահովագրության դասերով, որոնցով ապահովագրական հատուցումները ավելացել են համապատասխանաբար 16,5 % և 350 %, իսկ դրամական արտահայտությամբ երկուսը միասին՝ 938 259 հազար ՀՀ դրամ:

Այժմ տեսնենք, թե ընկերությունը վերլուծվող ժամանակաշրջանում հատուցումների ինչպիսի ցուցանիշներ է արձանագրել խոշոր ուղղություններով, վերլուծենք դրանց կազմը և կառուցվածքը ու տանք ծախսերի օպտիմալացման մեր տեսակետները:

Ծախսերի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը կատարվում է հորիզոնական և ուղղահայաց մեթոդներով [2]: Հորիզոնական մեթոդի միջոցով որոշվում է ծախսերի կազմը՝ դրանց առանձին տեսակների բացարձակ արժեքներն ու փոփոխությունները, իսկ ուղղահայաց մեթոդի միջոցով՝ ծախսերի կառուցվածքը՝ տեսակարար կշիռներն ու դրանց փոփոխությունները: Գնահատենք վերլուծվող կազմակերպության՝ «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 2014-2018 թթ. Ընթացքում կատարված ծախսերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները և ներկայացնենք ըստ տարիների այդ փոփոխությունների արդյունքում տեղ գտած բացարձակ և հարաբերական շեղումների համեմատական աղյուսակները (Աղյուսակ 2)

Վերլուծությունը կիրականացնենք այն ուղղություններով, որոնք ամենամեծ տեսակարար կշիռն են կազմում ընկերության ծախսերի կազմի մեջ: Ընկերության ծախսերը 2014-2018 թթ. ընթացքում ամենաշատը ուղղվել են ԱՊՊԱ-ի գծով: 2015 թ. նախորդ տարվա համեմատ նույն դասով ընկերության ծախսերը նվազել են 636 922 հազար ՀՀ դրամով և կազմել 3 043 129 հազար ՀՀ դրամ: Ըստ կառուցվածքի նվազումը եղել է 3,32 % և կազմել 38,1 %: Նվազում արձանագրվել է նաև ձեռքբեր-

ման ծախսերի գծով՝ 23 538 հազար ՀՀ դրամով, սակայն կառուցվածքային առումով նախորդ տարվա համեմատ նկատվել է աճ՝ 0,89 %-ով: Գումարային առումով նվազում, իսկ կառուցվածքային առումով աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծախսերի մյուս ուղղություններով նկատվել է ավելի մեծ նվազում, ինչի արդյունքում ընդհանուր կառուցվածքի մեջ ձեռքբերման ծախսերի տեսակարար կշիռը աճել է:

Ներկայացված ուղղություններով ծախսերի տեսակները արձանագրել են աճ. Մասնավորապես առողջության, ցամաքային տրանսպորտի ապահովագրության և այլ ծախսերի գծով աճը կազմել է համապատասխանաբար 21 466 հազար ՀՀ դրամ, 44 885 հազար ՀՀ դրամ և 57 182 հազար ՀՀ դրամ, իսկ կառուցվածքային առումով՝ 1,38 %, 0,72 % և 3,81 %: Մակայն կարող ենք փաստել, որ ընկերությունը կարողացել է դրական արդյունքի հասնել՝ նվազեցնելով ծախսերը: Ընդհանուր առմամբ 2015 թ. ընկերության ծախսերը նվազել են 897 690 հազար ՀՀ դրամով, ինչը նախորդ տարվա համեմատ 10,1 %-ով ցածր է: Նվազումը նաև պայմանավորված է այն ուղղություններով, որոնք ներառված չեն աղյուսակ 2-ում: 2016 թ. իրականացրած գործունեության արդյունքում ընկերությունը կրել է 7 642 112 հազար ՀՀ դրամի ծախս (Աղյուսակ 3): Տվյալ ցուցանիշը 2015 թ. համեմատ նվազել է 344 477 հազար ՀՀ դրամով: Ամենամեծ նվազումը կապված է ԱՊՊԱ-ի դասով ապահովագրական հատուցումների նվազման հետ՝ 185 920 հազար ՀՀ դրամ, իսկ կառուցվածքային առումով նվազումը կազմել է 0,72 %: Որոշակի նվազում է արձանագրվել նաև առողջության ապահովագրության դասով՝ 20 542 հազար ՀՀ դրամ՝ կազմելով 875 781 հազար ՀՀ դրամ: Մյուս խոշոր ուղղություններով կատարված ծախսերը աճել են փոքր քանակությամբ, այդ իսկ պատճառով ընդհանուր ծախսերի մեջ էական փոփոխությունների պատճառ չեն հանդիսացել: Տարին կարելի է բարեհաջող համարել, քանի որ նախորդ տարվա համեմատ նկատվել է ծախսերի նվազում:

Նույնը չենք կարող արձանագրել 2017 թ. համար: Ընդհանուր առմամբ, 2016 թ. համեմատ ծախսերի ծավալը ավելացել է 1 269 715 հազար ՀՀ դրամով: Նշանակալի աճ է գրանց-

վել գրեթե բոլոր ուղղություններով (Աղյուսակ 4):

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, ամենամեծ աճը գրանցվել է ԱՊՊԱ-ի դասով, որտեղ ապահովագրական հատուցումների ծավալները ավելացել են 440 049 հազար ՀՀ դրամով: Այնուհանդերձ, կառուցվածքային առումով նվազում է արձանագրվել՝ 0,39 %, ինչը հետևանք է այն բանի, որ մյուս ուղղություններով ավելի մեծ աճ է արձանագրվել: Նույնը կարող ենք ասել այլ ծախսերի վերաբերյալ. կառուցվածքային առումով գրանցվել է 1,82 % նվազում, սակայն բացարձակ առումով ծախսերի ծավալի աճը կազմել է 255 257 հազար ՀՀ դրամ: Ցամաքային տրանսպորտի և ձեռքբերման ծախսերի ցուցանիշները գրանցել են նվազման միտում՝ համապատասխանաբար 23 963 հազար ՀՀ դրամով և 49 558 հազար ՀՀ դրամով, սակայն ծախսերի խավալի վրա ազդեցության չափը փոքր տոկոս է կազմել: Նախորդ 2 տարիների համեմատ ընկերության ծախսերը ավելացել են, ինչը, բնականաբար, ընկերության գործունեության վրա բացասական ազդեցություն է թողնում: Ծախսերի այդպիսի աճը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության նոր դասով տրվել են բավականին մեծ ծավալի հատուցումներ՝ 244 344 հազար ՀՀ դրամ, ինչը չէր կարող չանդրադառնալ ծախսերի ծավալի վրա:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 5-ում, 2018 թ. «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ծախսերը հաշվետու ժամանակաշրջանում գերազանցում են բոլոր տարիների ցուցանիշներին:

Ծախսերի նվազում է արձանագրվել միայն ցամաքային տրանսպորտի ապահովագրության և ձեռքբերման ծախսերի ուղղություններով՝ համապատասխանաբար 55 372 հազար ՀՀ դրամ և 109 197 հազար ՀՀ դրամով:

Կառուցվածքային առումով ամենամեծ նվազումը գրանցվել է հենց ձեռքբերման ծախսերի գծով, իսկ աճը՝ սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության դասով՝ 4,96 %, ինչը բացարձակ առումով կազմել է 593 464 հազար ՀՀ դրամ՝ արձանագրելով աճի երկրորդ ամենաբարձր ցուցանիշը:

Աղյուսակ 3. 2015-2016 թթ. «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ծախսերի կազմի ու կառուցվածքի բացարձակ և հարաբերական շեղումների վերլուծությունը

Ծախսերի կատարման ուղղությունները	2015թ.		2016թ.		Շեղումը	
	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Ըստ գումարի (հզր ՀՀ դրամ)	Ըստ կառուցվածքի (%)
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	896 323	11,22	875 781	11,45	-20 542	+0,23
ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	171 146	2,14	214 093	2,8	+42 947	+0,66
ԱՊՊԱ	3 043 129	38,1	2 857 209	37,38	-185 920	-0,72
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	909 727	11,39	935 023	12,23	+25 296	+0,84
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	2 499 961	31,3	2 516 410	32,92	+16 449	+1,62
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (ՆԵՐԱՌՅԱԼ ՍՅՈՒՍ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)	7 986 589	100	7 642 112	100	-344 477	-

Աղյուսակ 4. 2016-2017 թթ. «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ծախսերի կազմի ու կառուցվածքի բացարձակ և հարաբերական շեղումների վերլուծությունը

Ծախսերի կատարման ուղղությունները	2016թ.		2017թ.		Շեղումը	
	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Ըստ գումարի (հզր ՀՀ դրամ)	Ըստ կառուցվածքի (%)
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	875 781	11,45	1 109 268	12,44	+233 487	+0,99
ՍՈՑՊ ՓԱԹՊ ՇԱՀՊ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	-	-	244 344	2,74	+244 344	+2,74
ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	214 093	2,8	190 130	2,13	-23 963	-0,67
ԱՊՊԱ	2 857 209	37,38	3 297 258	36,99	+440 049	-0,39
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	935 023	12,23	885 465	9,93	-49 558	-2,3
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	2 516 410	32,92	2 771 667	31,1	+255 257	-1,82
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (ՆԵՐԱՌՅԱԼ ՍՅՈՒՍ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)	7 642 112	100	8 911 827	100	+1 269 715	-

Աղյուսակ 5. 2017-2018 թթ. «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ծախսերի կազմի ու կառուցվածքի բացարձակ և հարաբերական շեղումների վերլուծությունը

Ծախսերի կատարման ուղղությունները	2017թ.		2018թ.		Շեղումը	
	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Գումարը (հզր ՀՀ դրամ)	Կառուցվածքը (%)	Ըստ գումարի (հզր ՀՀ դրամ)	Ըստ կառուցվածքի (%)
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	1 109 268	12,44	1 284 431	11,8	+175 163	-0,64
ՍՈՑՊ ՓԱԹՊ ՇԱՀՊ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	244 344	2,74	837 808	7,7	+593 464	+4,96
ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	190 130	2,13	134 758	1,23	-55 372	-0,9
ԱՊՊԱ	3 297 258	36,99	3 844 402	35,34	+547 144	-1,65
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	885 465	9,93	776 268	7,13	-109 197	-2,8
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	2 771 667	31,1	3 634 318	33,41	+862 651	+2,31
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (ՆԵՐԱՌՅԱԼ ՄՅՈՒՍ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)	8 911 827	100	10 876 015	100	+1 964 188	-

Ամենամեծ բացարձակ աճը արձանագրվել է այլ ծախսերի գծով՝ 862 651 հազար ՀՀ դրամ: 2018 թ. եկամուտների աճի հետ մեկտեղ տեսնում ենք՝ աճել են նաև ծախսերի ծավալները: 2017 թ. համեմատ ծախսերի ծավալը աճ է գրանցել 1 964 188 հազար ՀՀ դրամով, ինչը 2014-2018 թթ. ընթացքում աճի ամենաբարձր ցուցանիշն է:

Ծախսերի վերլուծությունից կարող ենք նկատել, որ ընկերության ծախսերը վերջին տարիներին համեմատաբար ավելացել են պարտադիր ապահովագրության տեսակներով, չնայած այն հանգամանքին, որ նույն ուղղություններով մեծացել են նաև եկամուտները: Ընկերությունը հիմնականում կարողացել է պահպանել Կենտրոնական բանկի կողմից սահմանած նորմատիվները [3]: Ծախսերի օպտիմալացման նպատակով ընկերությունը պետք է հիմնվի սակագնային ավելի ճիշտ քաղաքականության վրա, քանի որ, ինչպես երևում է ներկայացված տվյալներից, ծախսերը ավելի մեծ արագությամբ են աճում, քան եկամուտները: Ընկերությունը պետք է կար-

գավորի նաև անձնակազմի գծով ծախսերը, որը 2018 թ. աճ է գրանցել մոտ 74 %-ով՝ ավելանալով մոտ 495 000 հազար ՀՀ դրամով, ինչը բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում ընկերության ծախսերի մեջ: Կարող ենք նաև նկատել, որ կամավոր ապահովագրության դասերով ընկերությունը, ի տարբերություն պարտադիր ապահովագրության տեսակների, ավելի բարվոք վիճակում է, քանի որ ծախսերի աճը պայմանավորված է եկամուտների համապատասխան աճով:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Руденков И.А.** Страховое дело, Курс лекций. — Минск: БГУ, год неизвестен. — 170/459 с.
2. **Մարգարյան Ա., Առաքելյան Կ.** Տնտեսական գործունեության վերլուծություն/ Երեվան, Տնտեսագետ, 2005, էջ. 192,
3. http://www.rgs.am/uploads/Normatives_Q4_2018.pdf

*Տճանաչանման/Վերլուծվել է՝ 23.03.2020
 Рецензирована/Գրախոսվել է՝ 26.03.2020
 Принята/Ընդունվել է՝ 02.04.2020*